ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

ՀԱԿԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ Պ. ՍԵՎԱԿԻ «ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԵՋ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄ

Հականիշները՝ իբրեւ ոճական հնարանք կիրառելը, կախված է բուն ստեղծագործության բնութից: Չափածո խոսքում հականիշների միջոցով արտահայտված ոճական հնարանքները ավելի շատ են հանդիպում, քան արձակում: Ընդ որում հականիշ բառերի գործածությունը, դրանցով կազմված հակադրությունները ավելի քիչ են ԺԹ դարի վերջի եւ Ի դարի հայ բանաստեղծների (Հովհ. Հովհաննիսյան, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան) երկերում, քան ուշ շրջանի բանաստեղծների մոտ (Հ. Սահյան, Վ. Դավթյան, Հովհ. Շիրազ, Պ. Սեւակ):

Պարույր Սեւակը այն եզակի բանաստեղծն է, ում ստեղծագործություններում հականիշները լայն կիրառություն ունեն: Նա երբեք չի արտաբերում ոչինչ չասող խոսքեր: Ինքնատիպ պատկերներն ու համեմատությունները, հականշությունը, ռիթմերի, հանգերի, զուգորդումների հոսքը, հապտապտումներն ու ժիտրումները առավել ամբողջական են դարձնում իր ապրումը՝ լրիվությամբ, իր ցավը՝ ամբողջ խորությամբ պատկերելու համար:

Նրա ,Մարդը ափի մեջ, ,Եղիցի լույսե ժողովածուներում, ,Անլռելի զանգակատուն պոեմում մեծ չափերի են հասնում տարբեր բնույթի՝ բուն, իմաստային, իրադրական, համատեքստային հականիշները[1]:

Լեզվաբանությունը իմաստաբանության բնագավառում հսկայական նվաճումներ է ձեռք բերել Ի դարում: Ըստ ձեւաիմաստային դրսեւորումների, բառերը բաժանվում են համանունների կամ նույնանունների, հոմանիշների, հականիշների եւ հարանունների: Քանակային առումով այս բառախմբերում առաջին տեղը զբաղեցնում են հոմանիշները, երկրորդ տեղը՝ հականիշները, երրորդ տեղը՝ համանունները, չորրորդը՝հարանունները:

Այս բառախմբերը ծնունդ են առել հեռավոր անցյալում եւ իրենց կիրառություններն ու դրսեւորումներն են ունեցել գրաբարում, միջին հայերենում, բարբառներում, բայց անընդհատ աճելով՝ ավելի հարուստ ամբողջություն են ներկայացնում աշխարհաբարում: Այս դեպքում էլ առավելապես ուշադրություն է դարձվել համանունների եւ հոմանիշների, քան հականիշների եւ հարանունների վրա:

Հականիշների գիտական ուսումնասիրությունը սկսվում է Ի դարի 50-ական թվականներից եւ մի քանի տասնամյակների պատմություն ունի[2]: Առաջին անգամ Ա. Ղարիբյանն է, որ դպրոցական դասագրքում համանունների եւ հոմանիշների հետ, հականիշները բառերի ձեւաիմաստային մի առանձին խումբ է համարել: Հայ լեզվաբանական գրականության մեջ, մինչեւ 70-ական թվականները հականիշները ներկայացվել են սոսկ այդպիսի սեղմ ու հակիրճ, դասագրքային բնութագրումներով: Հայոց լեզվի հականիշները առաջին անգամ

1 Տե՛ս **Ն. Ռ. Շալունց**, Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երեւան,1979, էջ 89:
2 Տե՛ս **Ալ. Մարգարյան,** Հայոց լեզվի հականիշները, Երեւան, 1987թ, էջ 6:

ուսումնասիրել է Ռ. Շալունցը, ապա՝ Ս. Աբրահամյանը, Ս. Էլոյանը, Էդ. Աղայանը, Ա. Սուքիասյանը[3]:

Հականիշների ուսումնասիրության միջին շրջանը կարելի է բաժանել երկու խմբի՝

1.Հականիշ բառերի հարաբերությունները դիտվում են կիրառական տեսակետից: Հատկապես ուշադրություն է դարձվում իմաստային կողմերով հակադրվող հականշային խմբերի դասավանդմանը, դրանց մեջ մտնող միավորների կապակցելիությանը:

2.Հականիշների հարաբերությունների քննությունը կատարվում է բառերի համակարգային կապերը հաշվի առնելով:

Հականշության իմաստաբանական հիմքը հակադրությունն է՝ իբրեւ հակառակ կամ հակադիր իմաստերով իրար հետ կապված, որոշակի կապի ու փոխհարաբերության մեջ գտնվող բառերի ամբողջություն: Հականշային հարաբերություններ արտահայտող բառերը կազմում են որեւէ ընդհանուր հատկանիշով բնութագրվող բառերի հարացույց: Հականշություն կարող են արտահայտել միայն համեմատելի հասկացությունները, որոնք միատեսակ չեն, կարող են լինել համատեղելի եւ անհամատեղելի: Համատեղելի են այն հասկացությունները, որոնց ծավալները լրիվ կամ մասնակիորեն են համընկնում, անհամատեղելի են նրանք, որոնց ծավալները որեւէ կերպ չեն համընկնում՝ իրար բացառող հատկություններ արտահայտելու պատճառով: Հասկացությունները համեմատելի լինելով՝ նաեւ անհամատեղելի են եւ արտահայտում են երեք տեսակի՝ հակասող, հակադեմ, ստորակցության հարաբերություններ: Հականշության հիմք են ծառայում հակասող եւ հակադեմ հարաբերություն արտահայտող համեմատելի անհամատեղելի հասկացությունները: Այսպես, հականիշները լեզվական իրողություններ են, հակադիր իմաստներով իրար հետ կապված բառերի որոշակի համակարգ[4]:

Լեզվաբանների կողմից բառական հականշությունը տարբեր ձեւով է դիտվում: Ոմանք հականշությունը դիտում են նեղ իմաստով, ոմանք լայն, ոմանք ավելի լայն:

1.Հականշության նեղ ըմբռնում:

1.1.Միեւնույն բառի բառիմաստային տարբերակները, այսինքն հականշությունը տեսնում են մեկ բառի կազմում, երբ բառի կառուցվածքում գոյություն ունեն հակադիր իմաստներ[5]: Հակառակ իմաստների առկայությունը մեկ բառի կազմում ընդունված է անվանել էնանտիոսեմիա, այլ կերպ ասած ներբառութային հականշություն: Սա այն երեւույթն է, երբ բառի տարբեր իմաստները խոսքի մեջ կիրառվելով հակառակ նշանակությամբ կայունանում են այդ իմաստներով[6]: Այս երեւույթը, սակայն, հայերենին հատուկ չէ:

(Հայերենում հակադիր իմաստ արտահայտում են միայն որոշ բառեր, ինչպես՝

պարապել (=1.,ազատ լինելե եւ 2.,մի բանով զբաղվելե)

ձգել (= 1.,նետել,հեռու գցելե, եւ 2.,դեպի իր կողմը քաշել՝ ձգելե)

հոտել (=1.,նեհել, զարշահոտելե եւ 2.,բուրել, բուրմունք արձակելե)

վարակել (=1.,վարակ տարածելե, եւ 2., համակելե)

3 Տե՛ս անդ, էջ 8:
4 Տե՛ս անդ, էջ 22:
5 Տե՛ս **Շալունց**, էջ 10:
6 Տե՛ս անդ, էջ 142:

կապել (=1.,հանգուցելե եւ 2.,բրբ.բաց թողնել, ճանապարհ տալե)

անգին (=1.,գին չունեցող, առանց գնիե եւ 2., գին չունեցող՝ շատ թանկե) եւն: Բայց սրանք ավելի շատ կապվում են համանունության, քան թե հականշության հետ[7]:

1.2.Տարբեր բեւեռների պատկանող բառեր:

1.3.Միայն այն բառերը, որոնք որակային հատկանիշ են արտահայտում: Լեզվաբանները բացատրում են, որ իբր միայն որակային հատկանիշները կարող են հակադրվել, քանի որ միայն միայն որակային հատկանիշները կարող են փոփոխական լինել:

Հականիշ են դիտվում հակադիր իմաստ արտահայտող միայն տարարմատ բառերը:

2.Հականշության լայն ըմբռնում:

2.1.Հակադիր իմաստներ արտահայտող՝ համարմատ, ե՝ տարարմատ բառերը:

2.2. Որակային հակառակ հատկանիշ եւ ուղղվածություն ունեցող, ինչպես նաեւ հարաբերակից հասկացություններ անվանող բառերը:

2.3. Հակառակ ուղղվածություն ցույց տվող բառերը:

3.Հականշության ծավալուն ըմբռնում:

Այս դրույթի կողմնակից են այն լեզվաբանները, ովքեր ընդունում են բառական իմաստների բազմաբնույթ հակադրությունները:

Գոյություն ունեն բառական հակադրության երեք տիպ՝

1.կոմպլեմենտարություն,

2. հականշություն,

3. կոնվերսիա[8]:

Հականիշ ունենում են միայն այն բառերը, որոնք կապվում են հակասող կամ հակադեմ հարաբերակցական հասկացությունների հետ եւ արտահայտում իրարով պայմանավորվող հակադիր իմաստներ[9]: Շալունցի պնդմամբ, բառերի հականշային հակադրություններն իրենց բազմազան առանձնահատկություններով տարբեր են: Առավել հաճախ հանդիպում է արտահայտված եւ ենթադրվող հականշություն: Արտահայտված հականշություն համարում են խոսքի մեջ հականիշ բառերի միջոցով կառուցվող հակադրությունները: Օրինակ՝

Հոգուս վրա տխրություն է հաճախ թառում,

Երբ թաց աշնան չոր խաշամն է ծածկում առուն,

Չոր խոտի հետ, երբ այրվում է թուփը կանաչ,

Երբ մենք՝ հիմար տղամարդիկ, չենք նկատում ազնիվ կանանց[10]:

Ենթադրվող հականշությունը որոշակի տեքստում, խոսքի մեջ չարտահայտված հականշությունն է, որը բխում է հականիշ բառերի հարաբերակցական լինելու բնույթից, նրանց փոխադարձ կապից:

Օրինակ՝

Մխիթարեմ՝

Թե ինքնատիպ ու չընդունված բանաստեղծին,

---

7 Տե՛ս **Մարգարյան**, էջ 59:

8 Տե՛ս **Շալունց,** էջ 12:

9 Տե՛ս **Մարգարյան**, էջ 30:

10 **Պ. Սեւակ**, Մարդը ափի մեջ, Հայպետհրատ, Երեւան 1963, էջ 113:

Երախտապարտ որդիներով ու թոռներով,
Եվ հեգտմահու հատորներով,
Ապա փափակ ու միջակին,
Եվ առավել պարտաճանաչ բուռ գրչակին...[11]

Հականշության ոճական արտահայտչամիջոց է անտիթեզերումը: Սա այնպիսի կառույց է, երբ իրենց բովանդակությամբ միմյանց հակասող միավորները հակադրվում են կոնկրետ տեքստում: Հակադրվող միավորները կարող են համապատասխանել թե՝ էությամբ տարբեր երեւույթի, թե՝ միեւնույն երեւույթի տարբեր կողմերին: Անտիթեզի միջոցով արտահայտված իրողություններն ու դեպքերը մատուցվում են այնպես, անտիթեզ կազմող երկու մասերը միմյանց հետ կապվում են քերականական հնչերանգային եւ իմաստային սերտ կապերով եւ ըմբռնվում իբրեւ մեկ ամբողջություն, իբրեւ հակադրվող իմաստների միասնություն[12]:

Հականիշ բառերի միջոցով արտահայտված գեղարվեստական հնարքներից առանձնապես կարեւոր է օքսիմորոնը (հուն.oxymoron- սրամիտ,անմիտ): Դա այն դեպքն է , երբ իմաստով միանգամայն հակադիր եւ տրամաբանորեն մեկը մյուսին բացասող բառերը կապակցվում են: Սա այն եղանակն է, երբ հակառակ հասկացություններ անվանող բառերն համակցվում են իրար՝ կապակցության միտքն ավելի սուր արտահայտելու համար: Օքսիմորոնն ավելի շատ կազմվում է երկու տարբեր խոսքի մասերի պատկանող, հակառակ իմաստ արտահայտող բառերից[13]:

Առարկաների, երեւույթների հականշային հարաբերությունները դրսեւորվում է երկու եղանակով՝

1. Միեւնույն երեւույթի, առարկայի, հատկանիշի հակադիր աստիճանով եւ չափով:

2. Միեւնույն առարկայի, երեւույթի հատկանիշի բացառումով[14]:

Հականիշները տարբերվում են նաեւ ըստ կազմության (կամ կառուցվածքային հատկանիշի): Այսպես, կան հականիշներ, որոնք ածանցների միջոցով են հականշություն արտահայտում: Բայց կան նաեւ հականիշներ, որոնց հականշությունն արտահայտվում է տարբեր արմատներ ունեցող բառերով: Սրանք կազմում են հականիշների տարբեր խմբեր, որոնց մեջ մի դեպքում ածանցները, մյուս դեպքում տարարմատներն են կարեւոր ու էական դեր կատարում: Ածանցավոր հականիշները սովորաբար նույն, իսկ տարարմատ հականիշները տարբեր արմատներ են ունենում եւ իրարից զանազանելու համար կոչվում են համարմատ (կամ ածանցավոր) եւ տարարմատ (կամ տարահիմք) հականիշներ[15]:

Տարարմատ կամ տարբեր բառերով կազմված հականշային զույգերը կազմված են ձեւով տարբեր եւ իմաստով հակադիր բառերից:

Համարմատ հականիշները ծագումնաբանորեն կապվում են միմյանց հետ. առաջացել են միեւնույն արմատներից: Սրանք հականշություն արտահայտում են ոչ թե արմատների

11 Անդ, էջ 114:

12 Տես **Շալունց**, էջ 92:

13 Տես անդ, էջ 94:

14 Տես Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հեղինակներ՝ **Վ. Ղ. Առաքելյան, Ս. Ա. Էլոյան, Ա. Հ. Խաչատրյան**, Հայկական ՍՍՀԳԱ հրատարակչություն, Երեւան 1979, էջ 216:

15 Տես **Մարգարյան,** էջ 27:

հակադրությամբ, այլ ածանցների հակառակ իմաստներով: Ժամանակակից հայերենի համարմատ հականիշ բառերի հականշությունը արտահայտվում է միայն հականիշ նախածանցներով: Տարարմատ հականիշ բառերը ծագումնաբանորեն չեն կապվում միմյանց հետ, դրանք առաջացել են միանգամայն այլ արմատներից[16]:

Մարգարյանի բնորոշմամբ, տարարմատ հականշային զույգեր են կազմում ինչ-որ հատկություն, ինչ-որ հատկանիշ ցույց տվող բառերը, որոնք զանազան՝ ժամանակի, տարածության, չափ ու ծավալի, ձեւի, զգացմունքային վիճակների, տարբեր տեսակ գործողությունների եւ այլ հատկանշային իմաստներ են արտահայտում[17]:

Այսպես՝

1.Ժամանակի իմաստ արտահայտող՝ նորություն- վաղեմություն,

Չեն հարգում նաեւ այն նորությունը,
Որ վաղեմության նոր տարբերակն է... [18]

անցյալ- գալիք

Դո՛ն, որ ոտքերդ խճողել ես դեռ անցյալի ցանցով,
Մինչդեռ ձեռքերդ մեկնել ես արդեն կանգնող գալիքին...[19]

հին- նոր

Մեր հին գինով՝ եւ՝ մի հին ու նոր կենաց,
Կենացն ըմպենք հավատարիմ բոլոր կանանց...[20]

2.Տարածության իմաստ արտահայտող՝

սար-ձոր

Ես կարող եմ ենթադրել, թե ինձ մոտ ես,
Թեպետ եւ մեզ սար ու ձորեր են անջատում...[21]

լեռ-փոս

...Թե այս լեռը...մի շուռ տված հսկա փոս է: [22]

3.Չափ ու քանակի իմաստ արտահայտող՝

էժան-թանկ

Տարբերում ենք մամուռ-կանաչ,
Էժան եւ թանկ: [23]

4.Ձեւի իմաստ արտահայտող՝

Թերուս-գիպակ, կեղծավոր-շիտակ

...Որ կեղծավորը հաղթի շիտակին,
Ճառող թերուսը խոհուն գիպակին:[24]

5.Զգացմունքային վիճակ արտահայտող՝

16 Տե՛ս **Ճալուռց,** էջ 101:
17 Տե՛ս **Մարգարյան**, էջ 35:
18 **Պ. Սեւակ**, էջ 87:
19 Անդ, էջ 106:
20 Անդ, էջ 86:
21 Անդ, էջ 95:
22 Անդ, էջ 95:
23 Անդ, էջ 132:
24 Անդ, էջ 119:

Խելացնոր-մարմանդ, լուրջ-կայտառ,
Ես հիանում-հրճվում եմ՝
Տարբեր վարքի
Ու բարքի տեր գեղերի
Խելացնոր ու մարմանդ,
Լուրջ ու կայտառ հոսանքով...[25]

Ի տարբերություն համարմատ հականիշների, որոնց հականշությունը արտահայտվում է դրական՝ իբրեւ սկզբնական, եւ ժխտական՝ իբրեւ եզրափակող բաղադրիչների հակադրությամբ, տարարմատ հականիշները իառը պատկեր են ներկայացնում:

ա) Կան հականիշներ, որոնց զույգերի մեջ գործ է ածվում նախ դրական եւ ապա բացասական իմաստ արտահայտող հականիշ անդամը:

Ինչպես՝ ջոր- թաց

Ովքեր չեն ջոկում ո՝չ թացը ջորից...[26]

գաղջ- թարմ

Ովքեր մտնում են հոտած գաղջ անկյուն,
Երբ կարող էին թարմ օդում մնալ...[27]

օգուտ-վնաս

Վիճեմ նաեւ այն վեճի դեմ,
Որի բերած օգո՞ւտն է շատ, թե՞ վնասը՝
Ես չգիտեմ...[28]

պղտոր- վճիտ,

Ես կարող եմ ենթադրել,
Թե այս ջուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է...[29]

բ) Կան տարարմատ հականիշներ, որոնց առաջին բաղադրիչ անդամը որեւէ բանի սկիզբը, ելակետը, իսկ մյուսը վերջը, ավարտն է ցույց տալիս:

Ինչպես՝ կպչում-պոկվում,

Ասե՛ք, ինչպես դեմ չխոսեմ
Այն պիտակին,
Որ չի սազում, բայց կպչում է ու չի պոկվում...[30]

ելք- մուտք

Ելք չե՞ք ծախում՝
Հազար ափսոս,
Թե չէ մուտքը իմ կողքին է...[31]

25 Անդ, էջ 94:
26 Անդ, էջ 86:
27 Անդ, էջ 87:
28 Անդ, էջ 91:
29 Անդ, էջ 95:
30 Անդ, էջ 90:
31 Անդ, էջ 102:

գ) Կան փարարմատ հականիշներ, որոնց բաղադրիչ անդամները ժամանակային հաջորդականություն են ցույց տալիս[32]: Ինչպես՝

հեռակա-ներկա

Աղաչում եմ.-
Մի վրդովվե՛ք, եթե ասեն
. . . . . .
Հեռակային՝ հենց հեռակա,
Ո՛չ թե ներկա...[33]

Համարմատ հականիշ բառերը ծագումնաբանորեն կապվում են միմյանց հետ, առաջացել են միեւնույն արմատից: Դրանց հականշությունը արտահայտվում է ոչ թե արմատների հակադրությամբ, այլ ածանցների հակառակ իմաստներով: Համարմատ հականշությունը արտահայտվում է միայն հականիշ նախածանցներով[34]:

Համարմատ հականիշների հարաբերությունը դրսեւորվում է երկու եղանակով՝

1. Համարմատ կամ միեւնույն բառով կազմված զույգերից, որոնք հակադիր եզրում որեւէ ժիտական նախածանց են ստանում:

2. Համարմատ հականշային զույգում հնարավոր է առաջին եզրի վերջածանցի դուրս ընկնելը՝ երկրորդ եզրում[35]:

մեղավոր- անմեղ

Նրան ծեծում ու տանջում է ամեն վայրկյան,
Չհարցնելով անմե՞ղ է, թե մեղավոր է...[36]

Համարմատ հականշային զույգերը մեծ մասամբ կազմում են մենիմաստ կամ երկանդամ հականիշներ[37]:

Հականիշները ըստ քերականական կառուցվածքի եւ բառապաշարի՝ միմյանց հետ սերտորեն կապված հակադիր հարաբերությունների տեսանկյունից լինում են քերականական եւ բառային:

Քերականական հականիշները ցույց են տալիս քերականական նշանակությամբ իրար հետ կապված հակադիր հարաբերություններ, որոնք զուտ քերականությանն են վերաբերում: Քերականական հականշություն են արտահայտում, օրինակ բայերը՝ իրենց դրական ու ժիտական խոնարհման ձեւերով,

ինչպես՝ հավանում եմ- չեմ հավանում

Եվ...գիտե՞ք արդյոք, թե ինչ եմ անում,
Ա՞յս եմ հավանում,
Այն չե՞մ հավանում...[38]

լինել-չլինել

32 Տես **Մարգարյան,** էջ 36:
33 **Պ. Սեւակ,** էջ 123:
34 Տես **Շալունց,** էջ 102:
35 Այդ.,էջ 208:
36 **Պ. Սեւակ,** էջ 116:
37 Տես **Մարգարյան,** էջ 36:
38 **Պ. Սեւակ,** էջ 121:

-,Լինե՞լ- թե՞ չլինել,- այս է խնդիրը...[39]

Բառային հականիշներն առանձին բառերով կամ բառային միավորներով իրար հակադիր իմաստներ արտահայտող հականիշներ են, որոնք կապվում են հարաբերակցական հակասող եւ հակադեմ հասկացությունների հետ: Հակասող հասկացությունների հետ կապվող հականիշները կազմում են ժխտական հականշային զույգեր, որոնք ունենում են իրար հակադրվող դրական ու ժխտական անդամներ,

ինչպես՝ անմեղ- մեղավոր

...Նրան ծեծում ու տանջում է ամեն վայրկյան՝

Չհարցնելով անմեղ է, թե մեղավոր է...[40]

Իսկ հակադեմ հասկացությունների հետ կապվում են այն հականիշները, որոնց անդամները ոչ թե ժխտում կամ բացասում, այլ պարզապես իրար հակառակ իմաստներ են արտահայտում[41]:

Ինչպես՝ էժան-թանկ, շեն- ավեր,

Հերքված ասփծուն խեղճ ու բարի՝

Հազար ու մի շեն ու ավեր տաճարներով[42]:

ոխերիմ-հաշտ

Ինչ խոստանամ,

Եթե լեռ եմ՝ դա՛շտ չեմ դառնա,

Ոխերիմ եմ՝ հա՛շտ չեմ դառնա...[43]

Իմաստային համապատասխանության տեսանկյունից հականիշ բառերը մի քանի դրսեւորումներ ունեն: Այսպես՝

ա) կան հականիշներ, որոնք միայն անձ են նշանակում կամ միայն անձի են վերաբերվում: Օրինակ՝

տղաներ- աղջիկներ

Աշխարհում կա ջահելություն,

. . . . . .

Կան տղաներ ու աղջիկներ...[44]

տղամարդիկ-կանայք

...Երբ մենք՝ հիմար տղամարդիկ,

Չենք նկատում ազնիվ կանանց...[45]

բ) կան հականիշներ, որոնք միայն իր են նշանակում, կամ միայն իրի են վերաբերում: Օրինակ՝ թաց-չոր, շեն-ավեր են:

Հականշային զույգը սովորաբար երկու բառերի հակադրություն է , սակայն լինում են դեպքեր, երբ հականշությունը արտահայտվում է երեք բառերի միջոցով: Այդպիսի բառերը

39 Անդ, էջ 125:
40 Անդ, էջ 117:
41 Տես **Մարգարյան**, էջ 25:
42 **Պ. Սեւակ**, էջ 116:
43 Անդ, էջ 98:
44 Անդ, էջ 81:
45 Անդ, էջ 113:

սակավ են եւ կոչվում են եռանդամ հականիշներ: Դրանք ունենում են միջին անդամ, որը հակադիր ծայրաթեւերը իրար հետ կապելու, հակադրելու դեր է կատարում: Բայց ինչպես միջին, այնպես էլ ծայրաթեւային անդամները կապվում են իրար հետ նաեւ երկկողմանի հակադրությամբ եւ կազմում երկանդամ հականիշներ[46]:

Ինչպես՝ ճյուղ- սաղարթ- արմատ

Ես հպարտ եմ իմ ճյուղերով, սաղարթով,
Բայց առավել՝ իմ արմատով...[47]

կկոցում- բացում-փակում

...Սեւ աչքերը մերթ՝ կկոցում,
Մերթ՝ լայն բացում,
Մերթ փակում է,-
Սկսվում է... զուշակումը[48]:

Գեղարվեստական արտահայտչական, լեզվական-ոճական կարեւոր միջոց լինելով, հականիշները քարացած ու անշարժ չեն մնում, այլ ժամանակի ընթացքում, մանավանդ գեղարվեստական գրականության զարգացմամբ պայմանավորված, աճում են ու հարստանում նոր հականիշներով: Այդ հիմքի վրա էլ ստեղծվում են այնպիսի հականիշներ, որոնք ընդհանուր արժեք չունեն եւ կիրառվում են միայն այս կամ այն հեղինակի խոսքում: Այդպիսի հականիշները կոչվում են անհատական կամ խոսքային, համատեքստային կամ հեղինակային հականիշներ[49]:

Բնագրում նման կառույցը ստացել է ավելի շատ փոխաբերականի իմաստ:

Օրինակ՝ մարդ-կապիկ

Ա՛յ շան որդիք,
Մա՞րդ ենք կոչվում,
Թե՞ կապիկ ենք[50]_

արտասովոր-լուսավոր

...Եվ իմ ապրած ժամանակը՝
Արտասովոր
Եվ
Լուսավո՛ր՝
Ոչ մի բանով չի նմանվում
Այդ նզովյալ ժամանակին...[51]

ասպղե- սեւ

Եվ ա՛յն,
Որ ասպղե իր խալերի հետ

46 Տես **Մարգարյան,** էջ 58:
47 **Պ. Սեւակ**, էջ 142:
48 Անդ, էջ 81:
49 Տես **Մարգարյան**, էջ 27:
50 **Պ. Սեւակ**, էջ 97:
51 Անդ, էջ 117:

Նա դեմքը ծածկող սեւ ամպեր ունի[52]:

դարբին- ոսկերիչ

Ես հոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից:
Լաւ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...[53]

Հականիշներն առանձնանում են նաեւ խոսքի մասային առումով: Հականիշներն արտահայտվում են ածականներով, գոյականներով, բայերով, մակբայներով, սակայ՝ դերանվամբ, կապերով, եղանակավորող բառերով, ձայնարկություններով: Թվականները եւ շաղկապները խոսքի մասային իմաստով պայմանավորված հականշային խմբեր չեն կազմում: Ավելի շատ հականշային խմբեր կազմվում են ածականներով, գոյականներով, բայերով, մակբայներով: Ընդ որում գերիշխում է ածականը , որով հականիշներն ու հականշային խմբերը կազմում են հականիշ բառերի կեսից ավելին. դա պայմանավորված է ածականների խոսքիմասային իմաստով, բնույթով ու էությամբ[54]: Հականշային զույգեր են կազմում թե որակական, թե հարաբերական ածականները: Որակական հականիշ ածականները մեծ մասամբ ցույց են տալիս՝

1. Մարդկանց ֆիզիկական ու հոգեկան որեւէ հատկանիշ, ինչպես՝ կեղծավոր- շիտակ, թերուս- գիտակ:

2. Մի որեւէ հատկանիշ ունենալու կամ դրանից զուրկ լինելու գաղափար, ինչպես՝ մեղավոր- անմեղ:

3.Գունային հատկանիշներ, ինչպես՝ շեկ-սեւ

Իբրեւ սկիզբ ընդհամենը ես այս կասեմ,
Աշխարհում կա ջահելությունն,
. . . . . .
Կա շեկ, կա սեւ...[55]

4.Զգայական օրգանների կողմից ընկալվող հատկանիշներ, ինչպես՝ թարմ- գաղջ:

5.Տարածական, ժամանակի հատկանիշներ, ինչպես հին-նոր, հեռակա-ներկա:

6.Որեւէ ընդհանուր հատկանիշով չբնութագրվող, իմաստային բազմազան հատկանիշներ,

ինչպես՝ պղտոր-վճիտ

Ես կարող եմ ենթադրել,
Թե այս ջուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է[56]:

Ըստ Շալունցի հարաբերական հականիշ ածականները ցույց են տալիս՝ ժամանակի, տարածական, վերաբերության հատկանիշներ: Ալ. Մարգարյանը վերը նշված հատկանիշներին ավելացնում է եվս մեկը՝ մի բան անող, կատարող հատկանիշ:

Գոյականի քերականական կարգ ունեն այն բառերը, որոնք անվանում են առարկաները, երեւույթները: Այստեղից էլ ենթադրվում է, որ գոյականական հականշային խմբի մեջ մտնում են միայն այն բառերը, որոնք այդպիսի իմաստ են արտահայտում: Թանձրացա-

52 Անդ, էջ 109:
53 Անդ, էջ 83:
54 Տես **Մարգարյան**, էջ 97:
55 **Դ. Սեւակ**, էջ 81
56 Անդ, էջ 95

կան հատկանիշը քիչ է տարածվում գոյական-հականիշի վրա[57]: Հականիշ գոյականների մեծ մասը հիմնականում վերացական իմաստ արտահայտող բառեր են: Սակայն վերացական եւ թանձրացական գոյականների իմաստային այս ստորաբաժանումը բացարձակ չէ: Ալ. Մարգարյանի պնդմամբ, գոյական հականիշները լինում են համարմատ, տարարմատ, ժխտական ու ոչ ժխտական: Ն. Շալունցը ընդունում է այս կարծիքը եւ ավելացնում, որ քանակային տեսակետից համարմատ հականիշ գոյականները գերազանցում են տարամատ հականիշ գոյականներին: Ժխտական բնույթի հականիշ գոյականների հականշությունը արտահայտվում է ժխտական, իսկ որոշ դեպքերում նաեւ հակ- նախածանցի միջոցով[58]: Նմանօրինակ հականշային զույգ է մեղավոր-անմեղ հակադրությունը: Ավելի լայն տեսակարար կշիռ ունեն տարարմատ հականիշ գոյականները, որոնք երկու խմբի են բաժանվում՝

1. հականիշներ, որոնք արտահայտվում են հիմնաբառային գոյականներով, ինչպես՝ օգուտ-վնաս

Վիճեմ նաեւ այն վեճի դեմ,
Որի բերած օգո՞ւտն է շատ, թե՞ վնասը՝
Ես չգիտեմ... [59]

բաց-փակ

Թրթռում եմ
Բաց աչքերով խարխափումից,
Փակ թշնամուց...[60]

խավար-լույս

Խավարն եմ ատում, եթե խավարում
Ոչ միտք է ծնվում, եւ ոչ էլ զավակ:
Եւ լույսն եմ ատում, թեկուզեւ պայծառ,
Թե չի հանդուրժում մինչեւ իսկ շվաք[61]:

2. Հականիշներ, որոնք այնպիսի տարարմատ բաղադրյալ գայականներով են արտահայտվում, որոնց հականշությունը կապվում է այլ խոսքի մասի կամ այլ լեզվական իրողության հականշայի իմաստի հետ:

Օրինակ՝ հաղթություն- պարտություն

Ես կարող եմ ենթադրել,
Թե այս քունը արթնություն է,
Եւ այն պայծառ պարտությունը
Չտեսնված հաղթություն է[62]:

կեղծավոր-շիտակ

Ես չէի թողնի,

57 Տես **Շալունց**, էջ 119
58 Տես **Մարգարյան**, էջ 83
59 **Պ. Սեւակ**, էջ 91
60 Անդ, էջ 92:
61 Անդ, էջ 85:
62 Անդ, էջ 95:

Որ կեղծավորը հաղթի շիտակին...[63]

Տարարմատ գոյական հականիշները արտահայտվում են այնպիսի բառերով, որոնք ցույց են տալիս՝

ա) որակային որեւէ հատկանիշ,

ինչպես՝ չարություն - բարություն

Ես հավատում եմ նրա բնության ոչ թերությանը՝
Սգորությանը,
Ու չարությանը,
Այլ խորությանը,
Ու բարությանը
Ոչ ծերությանը...[64]

բ) առարկայի կամ երեւույթի հակառակ կողմերը, ծայրաթեւերը, ինչպես՝

երես- ապտառ

Ապում եմ նաեւ այն խելոք սուսիկ-փուսիկությունը,
Որտեղ դժվար է տարբերել անգամ երեսն ապտառից[65]:

գ) ժամանակի հատկանիշ ցույց տվող բառերը , ինչպես՝ անցյալ-գալիք, հեռակա-ներկա:

դ) Սեռով, դիրքով կամ դերով իրարից տարբերվող անձինք, ինչպես՝ տղամարդիկ-կանայք, տղաներ- աղջիկներ, ավագ- կրտսեր:

Հականիշների համակարգում մեծ տեղ են զբաղեցնում բայական հականիշները: Կազմության տեսակետից դրանք կարելի է բաժանել համադրական եւ հարադրական խմբերի:

Համադրական հականիշ բայերը կազմվում են՝

ա) բայարմատից եւ -ել, -ալ բայական ձեւույթներից,

ինչպես՝ վառել- մարել

Նո՛յն այդ ձեռքերով՝
Ե՛վ ճրագ մարել,
Ե՛վ խարույկ վառել[66]:

բ) այլ խոսքի մասերից՝ հատկապես ածականից եւ բայից (հատկապես -անալ բայական ձեւույթով կազմված)[67]:

Օրինակ՝ չորացած (-անալ)- կանաչ

. . . . . .
Լինել նրա ոչ չորացած,
Ոչ էլ անգամ կանաչ խոտը[68]:

Հարադրական բայերից կազմված հականիշները կարելի է բաժանել երկու խմբի՝

ա) հականշային խմբի անդամներից մեկը համադրական բայ է, մյուսը հարադրական:

63 Անդ, էջ 119:
64 Անդ, էջ 112:
65 Անդ, էջ 84:
66 Անդ, էջ 111:
67 Տես **Շալունց**, էջ 129:
68 **Պ. Սեւակ**, էջ 96:

Ինչպես՝ կործանել- գործ անել

Գիպի կործանել,
Բայց եւ ... գործ անել[69]:

քուն մտնել- արթնանալ

Ես հիանում-հրճվում եմ՝
ԵՀ քուն մտած քարափով,
ԵՀ արթնացող տարափով[70]:

բ) հականշային խմբի երկու անդամներն էլ հարադրական բայեր են[71]:

Բայերի դեպքում որպես ժիտական ածանց գործ է ածվում չ- ժիտական մասնիկը, որը քերականական արժեք ունի եւ բայաձեւի վրա դրվելով՝ դրական գործողությունը ժիտում է[72]: Ինչպես՝ ունեմ-չունեմ, մտածում եմ- չեմ մտածում, լինել-չլինել: Բայական հականշությունը երբեմն արտահայտվում է տարարմատներով, ինչպես՝ սիրում- ատում: Հականիշների շարքում մեծ թիվ են կազմում մակբայները, սրանք եւս ըստ ձեւաբանական կառուցվածքի լինում են համարմատ եւ տարարմատ՝ արտահայտելով զանազան հատկանիշներ՝ ժամանակի, տեղի, չափ ու քանակի եւն:

Դան մակբայական հականիշներ էլ, որոնք արտահայտվում են ընդհանրական մակբայներով եւ մեկից ավելի հատկանիշներ են հակադրվում իրար: Ինչպես՝ մի անգամ- մշտական (եՀ ժամանակ, եՀ չափ ու քանակ):

Ես բաշխում եմ ազնվության անցագրեր,
Սակայն ոչ թե ,մի անգամվա*ի*,
Այլ ,մշտկան*ի*՝ միանգամայն[73]:

Մյուս խոսքի մասերով քիչ հականշային զույգեր են կազմվում. դա պայմանավորված է ոչ միայն նրանց կազմի մեջ մտնող բառերի քանակով, այլեւ նրանով, որ կոնկրետ առարկայական իմաստ պարունակող գոյականները, դերանունների մեծ մասը, կապեր, եղանակավորող բառեր, ձայնարկություններ հակադրական հատկանշային իմաստ կամ նշանակություն չեն դրսեւորում եւ ըստ այդմ էլ հականշային զույգեր չեն կազմում:

Այսպես, ուրեմն, հականիշ դառնում են որոշակի ձեւաբանականն կառուցվածքով իրարից որոշակիորեն տարբերվող բառերը: Հականիշները հականշային զույգեր են կազմում՝ ելնելով մի քանի սկզբունքից՝ իմաստային, կառուցվածքային, ձեւաբանական եւն:

69 Անդ, էջ 111:
70 Անդ, էջ 93:
71 Տես **Շալունց**, էջ 132:
72 Տես **Մարգարյան**, էջ 87:
73 **Պ. Սեւակ**, էջ 103: